ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, pam-bak@mail.ru, pambak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 103-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՄԱՑ ԱՄՍԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 24-րդ հոդվածի 1-ին մասով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Փամբակ համայնքի ավագանու անդամի իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց ամսական դրամական փոխհատուցում ստանալու վերաբերյալ կարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԲՈՋՈՒԿՅԱՆ ԹԻԱՆԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

2022թ. հուլիսի 21
գ. Փամբակ

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 103-Ա որոշման

ԿԱՐԳ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՄԱՑ ԱՄՍԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ

Սույն կարգով սահմանվում է Փամբակ համայնքի ավագանուն Փամբակ համայնքի բյուջեից տրվող ամսական դրամական փոխհատուցում ստանալու պայմանները:

Համայնքի ավագանու անդամը իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց իր ցանկությամբ և ավագանու որոշմամբ կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի մինչև 30 տոկոսի չափով:

Փամբակ համայնքի ավագանու անդամը ստանում է իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց ամսական դրամական փոխհատուցում, եթե՝

1. Մասնակցել է համայնքի ավագանու նիստերին և քվեարկություններին, մասնակցել է մշտական հանձնաժողովների նիստերին, ստորագրել է իր կողմից կայացված որոշումները և նիստերի արձանագրությունները. /Քանի որ Փամբակ համայնքի այն բնակավայրերը, որոնցից ընտնվել են ավագանու անդամներ գրեթե հավասարաչափ հեռավորության վրա են գտնվում Փամբակի վարչական կենտրոնից և բնակավայրից կենտրոն ուղիղ երթուղի չկա, ավագանու յուրաքանչյուր նիստին և մշտական հանձնաժողովների նիստերին մասնակցելու համար ավագանու կողմից կատարված ծախսերի փոխհատուցման գումար սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ:
2. Հանդիպում է կազմակերպել Փամբակ համայնքի բնակչության հետ, տեղեկացրել համայնքի ավագանու աշխատանքների մասին:
3. Մասնակցել է ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին:

Փամբակ համայնքի ավագանու անդամը իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց փոխհատուցում ստանալու համար պարտավոր է ներկայացնել իր կատարած ծախսերը հիմնավորող փաստաթղթեր (բացառությամբ նիստերին մասնակցելու և որոշումներն ու նիստերի արձանագրությունները ստորագրելու, մշտական հանձնաժողովների նիստերին մասնակցելու վերաբերյալ):

Փոխհատուցումը տրվում է հաշվի առնելով համայնքի ավագանու բնակության վայրի հեռավորությունը՝ պարտականության կատարման վայրից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**